

ԺՈՄՊԼԱԹ - ՀԱՐԻՐԻ  
ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցության ղեկավար, երեսփոխան Ուսիտ ժոմպլաթ երեկ երեկոյան այցելեց Քրրայթի, ուր հանդիպում մը ունեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ:

Քննարկուեցան երկիրը յուզող ընդհանուր հարցերը:  
Հանդիպումին ներկայ գտնուեցաւ երեսփոխան Պասէմ Սապաա:

# ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 L.Ո. 75ԳՊ ՏԱՐԻ, ԹԻՒ 239 (21289) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 23 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2002 10 ԷՁ

ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝  
ՆԱՊԱԹԻԵՒ ՄԷՋ

Անցեալ շաբաթավերջին շարունակելու ներքին ապահովութեան ուժերուն կողմէ ապահովական երեկոյան դրուծուիւր: Նապաթիէի մէջ պետեղուեցան անցարգելներ եւ իրեն արդիւնք ձեռք բերուեցան պետութեան կողմէ պահանջուած տասնեակ անձնաւորութիւններ:  
Նշեալ գործողութեան հսկեց ներքին ապահովութեան ուժերու հրամանատար Կոր. Սալիտ Իտ:

## ԼԻԲԱՆԱՆ ՈՒՆԻ ՄԵՌԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Կ'ԸՍԵ ՊԸՐՐԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրի անցեալ շաբաթավերջին խիստ քննադատութիւններ ուղղեց կառավարութեան հասցէին:

Նապաթիէի առեւտրականներու միութեան նոր կեդրոնատեղիին բացման առիթով, Պրրի ըսաւ, որ փափաքները չեն իրականանար օժանդակութիւններով, ներդրումներով, փոխտրուած գումարներով, տուրքերու յաւելումով կամ բջիջային հեռաձայնի մարպէն ներս պետութեան բաժնետոմսերը աւելցնելով:

Պրրի շեշտեց, որ հարկ է գտնել լուրջ ծրագիր մը՝ լուծելու համար ոչ միայն ընկերային տնտեսական հարցերը, այլ տուեալ մարպէրը կայունացնելու եւ ամրապնդելու համար:

«Հետեւաբար նշեալ ծրագիրը իրականացնելու համար հարկ է ստեղծել նոր կառավարութիւն, որ կարենայ առաջին հերթին ենթարկուիլ սահմանադրութեան, օրէնքին եւ թափֆի հա-

մաձայնագիրին որոշումներուն իր գործունէութեան եւ վարչական դրուծուիւրներուն մէջ», ըսաւ Պրրի:

Պրրի մերժեց, որ ջուրի մարպի ապապետականացում կատարուի յատկապէս հարաւային Լիբանանի մէջ, որովհետեւ Իսրայիլ կրնայ խանգարել հապարտուր ձեռնարկը:

Պրրի յայտնեց, որ Լիբանանի գերագոյն շահերուն համար կը փորձէ պատկերացնել նոր կառավարութիւն մը, որովհետեւ ներկայի կառավարութիւնը մահացած է եւ մեղք ունի դիակը հարուածել:

Հանդիսութեան ներկայ էին վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայացուցիչ տնտեսութեան նախարար Պասէլ Ֆլեյխան, կենսոլորտի նախարար Միշէլ Մուսա, ինչպէս նաեւ մեծ թիւով երեսփոխաններ, քաղաքական, պիւնտրական, ապահովական ու կրօնական պաշտօնատարներ եւ ժողովուրդի հոծ բազմութիւն:

## ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԵՐԵՔ ՄԱՍԵՐՈՒ ԲԱԺՆԵՑ ԿԱԶԱՆ

Իսրայէլեան ուժերը երէկ ներխուժեցին Կազայի հարաւային շրջանը, ուր քանդեցին պաղեստինցիներու բնակարաններ, «ըրկէ՛ ըստ իսրայէլեան աղբիւրներու, ձեռնառումներ նետուած են հրէական բնակեցման վայրի մը ապահովութեան հսկող զինուորներուն վրայ:

Իսրայէլեան քաղաքին մօտ գտնուող Մորակ բնակեցման վայրին վրայ Շարաթ գիշեր գործուած յարձակումին վիրաւորուած էր իսրայէլացի զինուոր մը: Իսրայէլեան ուժերը յաջողած են սպաննել յարձակում գործող պաղեստինցիներ: Պաղեստինի Ազատա-



Ապրտ Ալալ ընտանիքի անդամներ կը փորձեն իրենց տան աներկցեցրու մէջէն դուրս բերել ինչ որ հնարաւոր է

գրութեան ժողովրդավար ներուէն լոյսին տակ, իսրայէլեան ուժերը Կազայի շրջանը բաժնեցին երեք մասերու՝ անցարգելներով անջատելով շրջանները իրարէն: Բանակին մէկ բանաբերը հաստատեց, որ Կազայի մաս մտաւ նաեւ Ռաֆա, ուր ռմրահարեց իր կողմէ պաղեստինցիներու բնակարաններ, յայտնեցին պաղեստինցիները: Բնակարանները կը պատկանէին իսրայէլական ժիւստի երկու հետեւորդներու:

Շարաթավերջին կատարուած ներխուժումը Շար.ը՝ էջ 3

## ՏԵՆՔԹԱՇ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ ՈՒՆԻ ԵՐՈՊՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՆԳՐԱ, 22 (ԱՅՓ). - Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ յայտնած է, թէ Եւրոպական Միութեան պիտի առաջարկէ, որ Հիւսիսային Կիպրոսը Թուրքիոյ հետ միաժամանակ անդամ ընդունի, եթէ կղզին մինչեւ 2004ի անդամակցութիւն չվերամիանայ, հաղորդած է թրքական թերթ մը Կիրակի օր:

ՄԱԿի խաղաղարար ծրագիրը կ'առաջարկէ կղզիին յոյն եւ թուրք համայնքներուն, որ մինչեւ Փետրուար 28 համաձայնութիւն մը գոյացնեն, որպէսզի 2004ին վերամիացած Կիպրոսը կարենայ Ե. Միութեան անդամակցիլ: Այլապէս, Ե. Միութիւնը կ'ըսէ, թէ միայն միջապային ճանաչում ունեցող յոյն կիպրական կառավարութիւնը պիտի ընդունի:

Տենքթաշ «Միլիիէթ» օրաթերթին հետ հարցազրոյցի մը մէջ յայտնած է, թէ փոխընտրանք առաջարկ մը պատրաստած է, այն պարագային համար, որ մինչեւ Փետրուարի վերջերը համաձայնութիւն մը չգոյանայ:

## ՄԻՆՉ ԻՐԱՔԻ ՄԷՋ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԸ ՀԱՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԱՓ ԿԸ ՍՏԱՆԱՆ

## ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԻՐ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՓՈԽԱՆԱԿԷ ՄԱԿԻ ԶԷՆՔԻ ՔՆՆԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Միացեալ Նահանգներ սկսան իրենց ունեցած տեղեկութիւնները փոխանակել Իրաքի մէջ գործող ՄԱԿի քննիչներուն հետ, մինչ շրջանին մէջ թափ կը ստանալին պատերազմի պատրաստութիւնները:

ՄԱԿի քննիչները, որոնք 23 օրէ ի վեր քննութիւններ կը կատարեն Իրաքի տարածքին, երէկ տեղեկութիւններ ստացան ամերիկեան բանակի գաղտնի սպասարկութեան հաւաքական քանդումի վէճեր արտադրող կեդրոններու մասին, որոնք ըստ Պաղեստինի գոյութիւն չունին: Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատար մը ըսաւ, որ անհրաժեշտ տեղեկութիւնները սկսած են փոխանցուիլ ԱՆՄՈՎԻՔի եւ հիւլէական ուժանիթի միջապային գործակալութեան քննիչներուն: ԱՆՄՈՎԻՔի գլխաւոր քննիչ Հանս Պիքս օրերէ ի վեր կը պահանջէր, որ Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա քննիչներուն հետ բաժնեն իրենց տեղեկութիւնները, եթէ կ'ուզեն հաստատել, թէ հաւաքական քանդումի վէճեր գոյութիւն ունին Իրաքի մէջ:

«Նիւ Եորք Թայմզ» օրաթերթը կը գրէր, թէ Ուաշինկթըն քննիչ-



Իրաքի պաշտօնատար մը կը խորհրդակցի ՄԱԿի գէնքի բնօրէն մէկուր հետ ճախքան գէնքի գործարարի մը ստուգումը

ներուն սեփականութիւնը դարձուցած է

## ՌՈՒՍԻԱ ՎՐԱՍՏԱՆԷՆ ԳԻՒՄՐԻ ԿԸ ՓՈԽԱԴՐԷ ԶԻՆ. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԱՐՔԵՐ

Ռուսիոյ եւ Վրաստանի զինուորական պատասխանատուներու միջեւ կայացած համաձայնութեան հիման վրայ Ռուսիա Շարաթ օր սկսաւ Վրաստանէն Գիւմրիի մէջ հաստատուած ռուսական 102րդ խորհրտ փոխադրել զինուորական հաղորդակցութեան միջոցներ:

Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութեան մամուլ ծառայութիւնը յայտարարեց, որ Վրաստանէն Հայաստան կը փոխադրէ առաջինը Անդրկովկասի ռուսական ուժերու հաղորդակցութեան 66րդ կեդրոնի այն երեք ստորաբաժաններէն, որոնք հաստատուած են Թիֆլիսի մերձակայ կողմի շրջանին մէջ: Հաղորդակցութեան կեդրոնին միւս երկու ստորաբաժանները Գիւմրի պիտի փոխադրուին յառաջիկայ օրերուն:

Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութեան միջազգային ռազմական հաղորդակցութեան գլխաւոր վարչութեան պետ Գոր. Անաթոլի Մազուրկեւիչ յայտնեց, որ Վրաստանէն ռուսական սարքերու Հայաստան փոխադրութիւնը «պիտի չփոխէ ռազմական ուժերուն հակակշիռը շրջանին մէջ»: «Բոլոր այն խօսակցութիւնները, թէ այդ միջոցներուն դուրսբերումը կրնայ վնաս հասցնել Թիֆլիսի եւ Պաքուի ռազմական անվտանգութեան, զուրկ են որեւէ հիմքի, աւելցուց զօրավարը:

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՄԱԶԳ. ԿԵԴ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԸՆԿ. ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՀԵՏ, ՄԱՐՅԷՍԻ ԴԵՄԱՐԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԸՆԷՔԻՆ ԲԱՅՄԱՆ ԱՌԻՈՒՎ

## ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ - ՀԱՐԻՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախագահ Գոր. Էմիլ Լահուտ անցեալ շաբաթավերջին ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային հարցեր: Քննարկումի առարկայ դարձան յատկապէս ապապետականացման գործընթացը հետապնդելու եւ գայն օրէնքներուն համաձայն գործադրելու հեռանկարները:

2003ի պետական պիտեճէին ակնարկելով՝ իշխանութեան երկու պետերը նկատել տուին, որ խորհրդարանի փոխանցուած պիտեճէն պէտք է վաւերացուի: Քննարկուեցան նաեւ լիբանանեան ներքին բեմը յուզող հարցերը:

Հանդիպումէն ետք վարչապետ Հարիրի մեկնեցաւ Դամասկոս:

## ՀՐԱՆԴ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ ՀՈՂԻՆ ՅԱՆՁՆՈՒԵՑԱԻ

Հայաստան. Շաբաթ օր իր վերջին հրաժեշտը տուաւ հայ արդի գրականութեան մեծագոյն անուանեցեալ Հրանդ Մաթեւոսեանին: Հազարաւոր հայեր այցելեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցի վերջին հրաժեշտը տալու համար Մաթեւոսեանին: Անոնց շարքին էին Հայաստանի նախագահ Ռոպերթ Բոչարեան, Ազգային ժողովի նախագահ Արմէն Խաչատուրեան, պետական, քաղաքական, մշակութային գործիչներ:



Հրանդ Մաթեւոսեանի հարազատներուն ցաւակցուելու յայտնեցին Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան եւ այլ պատասխանատուներ:

Հազարաւոր երեւոցիներու, Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի եւ Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշէս Թումանեանի ուղեկցութեամբ, Հրանդ Մաթեւոսեանի դագաղը տեղափոխուեցաւ Կոմիտասի անուան Պանթեոն, ուր ամփոփուեցաւ հայ մշակոյթի մեծանուն գործիչներու շիրիմներուն կողքին:

Թարման սգոյ հաւաքին, Հրանդ Մաթեւոսեանի բովանդակալից կեանքն ու գրականութիւնը ըստ արժանւոյն գնահատեցին Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան, Հայաստանի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնամարզի նախարար Ռոյանտ Շառոյեան, Հայաստանի նախագահի խորհրդակցան, բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեան եւ Արտաշէս Թումանեան:

Լեւոնային Ղարաբաղի Ազգային ժողովի նախագահ Օլէկ Եսայեան հրապարակեց արցախահայութեան անուանով Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Դուկասեանի ցաւակցական գիրը:

ՄՕՏ ՕՐԵՆ  
ԱԶԳԱԿ  
SARKIS & HAGOP LOUSSARARIAN  
We wish you a warm Christmas & a healthy New Year  
«ԱԶԳԱԿ» 2003Ի ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՅԱՌԻԿԸ



### ԿԼԻՍԱՆ ԴԵՊԻ ԲԱՐԵԼԱԻՈՒՄ

Պէյրուսի միջազգային օդակայանի օդերևութաբանական գրասենյակին համաձայն, Երեքշաբթի օրուրև (վաղը) կլիման ոլիպի բարելաւուի:

Լեռներուն վրայ ջերմապիճանը ոլիպի հասնի զերոյէն վար - 5 սապիճանի, իսկ Պերսայի մէջ՝ զերոյէն վար - 7ի:

Նշենք, որ անցեալ շաբաթավերջին փոթորիկները եւ ձիւները յապճապեցին մեծ վնասներ փճացնելով ցաւուած արպերն ու ջերմանոցները, ինչոյէ նաեւ յապճապ եղան ելեկտրական հոսանքի ընդհատման զանազան շրջաններու մէջ: Վնասներ արձանագրուեցան յապկաղէս Թրիփոլիի, Պաքուսի եւ Պապուլեթի մէջ:

### ԹԱԳԱԿԱՆՑԻԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Լուսանկարը՝ Սթիւտիո «ԱՇՆԱԿ»ի նաւի թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցած թագականութեան բնորոշ թիւերը:

Եկեղեցիներու շրջափակերուն կամ թագականութեան գրասենյակներուն մէջ, յատուկ յանձնարարութեամբ հսկողութեան տակ կազմեցած բնորոշ թիւերուն 20 տարիքին վեր եղող ազգայինները բնորոշին այն անձները, զորո յարմար նկատեցին այս առաքելութեան շարունակման համար: Ընարուցիկան ասի փերը բաց մնացին միջին երեկոյեան ժամը 5:00 եւ ասիթարուեցաւ ծիսակարգը:

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն վերաւորներ շարձանագրուեցան յայտնեցին պատկերացի պաշտօնատարներ, որոնք իսրայէլում, թէ կինեայները դիմապատր էին:

Հեղորոնի մէջ երէկ խաղաղ ցոյցի մը մասնակցեցան մտաւորապէս երկու հարիւր իսրայէլացիներ, որոնք կը պատկերէին «Մազադուր»-ին չիմա» շարժումին: Անոնք կը բողոքէին Հեղորոնի մէկ երէկան քնակեցման վայրերուն ընդարձակման ծրագիրներուն դէմ:

Աներիկեան կառավարութիւնը երէկ պաղեստինեան իշխանութեան յանձնեց վերջնական պատկերացումը իսրայէլական քարտէսին, լայնեց պաղեստինցի պաշտօնատար մը:

Մտէկ Ռուսթաբըաւ, որ ամերիկացի հիւպատոսը երէկ նամակ մը յանձնեց պաղեստինեան իշխանութեան: Նամակին միացած էր քարտէսին օրինակը:

(Ա.Յ.Փ)

### السفير النهار الذيق الاستقبال الاستقرار

Տեղական մամուլը իր 21 Դեկտեմբերի թիւով լուսարձակի տակ առած է շաբաթավերջին Լիբանանը հարուածած փոթորիկն ու տեղատարափ անձրեւները, անոնց գործած աւերներն ու ողորումները:

Միջազգային լուրերու կարգին օրաթերթերուն առաջին էջերը կը շարունակէն գրաւել իրաքեան հարցին եւ պաղեստինեան տագնապին առնչուող իրադարձութիւնները:

«Անուար» գրած է, թէ փոթորիկը վնասներ հասցուցած է լիբանանեան բոլոր շրջաններուն եւ անշարժացուցած՝ Պէյրուսի օդակայանը: Թերթին համաձայն, շուրթըր մուտք գործեցին լիբանանցիներուն տուններին ներս եւ վնասներ հասցուցին անոնց ցանքերուն:

«Սաֆիր» նշած է, «Ումանիթի պարտքը հասած է 1.8 միլիոն տոլարի, մինչ կառավարութիւնը կը ջանայ անհրաժեշտ գումարը ապահովել: Լիբանանը հարուածած փոթորիկը երեւան կը հանէ ելեկտրականութեան տագնապը»:

«Տիար»ի համաձայն, փոթորիկը Լիբանան հասաւ եւ ոչ ոքի ինսայեց: Տեղական լուրերու կարգին, թերթը գրած է, թէ պեպուրեան գրամը քաղաքականօրէն կը մսխուի, քաղաքական համաձայնութիւններու մէջ: Ըստ թերթին, նախարարաց խորհուրդը 40 եւ 60 միլիոն տոլար յատկացուց հարաւին եւ գաղթականներու սնտուկին: «Տիար» նաեւ լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ նախարարաց խորհուրդի օրակարգէն դուրս գտնուող կէտ մը վա-

երացուեցաւ Լահուտի նախագահութեամբ եւ Հարիրիի ներկայութեամբ:

«Նահար» գրած է, «Սպասուած անակընկալը փոթորիկ իր ծամանակին, իսկ կառավարութիւնը մը այլ ծամանակէ եկած»:

Ըստ «Լիուս»ի, Հարիրի կ'ըսէ, որ պապեւտակաւ անցանք գործընթացի մերժումը կը ճնշէ հանրային մարզին վրայ: Թերթը նշած է, թէ Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ կ'ըսէ, որ յառաջիկայ 6 ամիսներուն ընթացքին Լիբանան պիտի ապահովէ մեծ եկամուտ, իսկ պիտուրձէին բացը պիտի չանցնի 1 միլիառի սահմանը:

Իրաքեան հարցին մասին թերթը գրած է, թէ Կէնքի գլխաւոր քննիչ Պիլիքս Ուաշինկընէն եւ Լոնտոնէն տեղեկութիւններ կը պահանջէ փաստելու համար Պաղտատի դէմ ուղղած իրենց ամբաստանութիւններուն վաւերականութիւնը: «Լիուս»ի համաձայն, շրջանին մէջ ամերիկեան ուժերուն ստորապնդումը կը շա-

րունակուի եւ Իսրայէլը խօսի Իրաքի դէմ Փետրուարին կատարուելիք յարձակումի մը մասին: «Քիֆահ Արապի» գրած է, թէ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր բրիտանական ուժերուն կը հրահանգէ պատրաստ ըլլալ, իսկ Ուաշինկընը 50 հազար յաւելեալ զինուորներով իր ուժերը կ'ամրապնդէ Մոսկու մէջ: Ըստ թերթին, Քալիֆորնիոյ մէջ 2500 իսլամներ կը ձերբակալուին դաւաճանութեան ամբաստանութեամբ:

«Նահար» նշած է, թէ Թոնի Պլէր Կորակոչի կ'ենթարկէ իր պիւնուորական ուժերը, իսկ Մոսկուա կը հաստատէ, թէ Իրաք խախտումներ չէ կատարած: Թերթին համաձայն, Ուաշինկընը ճնշում կը բանեցնէ Իրաքի դէմ ուժ գործածելու նպատակով եւ միջազգային քննիչներուն տեղեկութիւններ կը փոխանցէ համապատասխան կեդրոններուն մասին:

«Տիար» լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ Միացեալ Մարտիկներու մը կը շա-

Շար.ը՝ էջ 9

**White-Westinghouse**

**Մայքրօուէյվ  
Մայքրօ գիներով**

- DIGITAL CONTROL 30 litres \$109 + VAT
- DIGITAL CONTROL 28 litres (with grill) \$109 + VAT
- DIGITAL CONTROL 28 litres \$99 + VAT
- ROTARY CONTROL 28 litres \$89 + VAT
- DIGITAL CONTROL 23 litres \$79 + VAT

Վճարումը՝ կանխիկ

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ. Պուրճ Համուտ Բաղաբապետ, հրապարակ ԳԵՈՒԱԶՅՆՆ 01-241000 2րդ մուտք, Մանթրը Պլանթոյէն Կառատուը ապահովուած

**PHOTO NERSES**

ԱՂԱՎ ՄՊԱՍԱՐԳԻՍԵԱՆ - ՈՐԱԿԱՌՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐ

Չոր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէ նոր հասած ԱՐԿԻՎԱԿԱՆ DIGITAL մեքենայի միջոցով որակաւոր եւ զանազան չափերով

Ստանձնում՝ 20 վայրկեանէն:

Լուսանկարները կ'արձանագրենք CDի եւ կամ FLOPPY տիպերներու վրայ

Cameraներու ճոխ հաւացանոյ ապահովել եւ մաքրի շրջանակներու ընտիր տեսակածի

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo մկարահանումը արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով

Պուրճ Համուտ, Բաղաբապետարանի փողոց, «Սանթրը Արին»ի դիմաց, Հեռ.՝ 01-261858 եւ 01-255992

**45 YEARS** National Panasonic Technics

**Panasonic**

RF-NA030 AM/FM Ultra Slim Pocket Radio Worth: \$38

SC-AK600 3200W, 5 CD, Dolby Digital \$300

This offer is valid till January 31, 2003

only on products guaranteed by TUTORIAN CORP. S.A. 04/712129-130, 711967, 03/243203 Fax: 04/712177, E-mail: TTC@cyberia.net.lb Add 10% VAT on above prices

Հայ Կարողիկ

**ՄԵՍՐՈՊԵԱՆ**

Արուեստից Վարժարան

1982 - 2002

Բացում Բ. երկամսեակի

Անգլերէն՝ 16 Դեկտեմբերին

Համակարգիչ՝ 23 Դեկտեմբերին

Համակարգիչի լրիւ դասընթացը՝ ամսական միայն 25 հազար լ.ո.

260504 www.mesrobian.com

**IGOL MOTOR OIL**

**FUEL CARD**

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:







Ս. ԾՆՈՒՆԴԻ ՆԱԽՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՀՕ, ՀՕ, ՀՕ՞, ԱՒՍՏՐԻԱՑԻՔ Կ'ԸՍԵՆ՝ ՈՉ

### ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՄԲԱԼԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՅԼ ՕՐԻՆԱԿ ՄԸ ՆԿԱՏԵԼՈՎ՝ ԱՒՍՏՐԻԱՑԻՔ ԿԸ ՄԵՐԺԵՆ ՋԱՅՆ: ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԸ ՁԵՌՆԱՐԿԱԾ Է ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՑ ՅԻՍՈՒՄ ՍԱՆՈՒԿԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԱՐՁԱՒԻ ՄԸ: «ՏԸ ՆՈՒ ԵՈՐՔ ԹԱՅԱՁ» ԿԸ ԳՐԷ.

Այս օրերուն անբաղձալի հիւր մը կայ Վիեննայի հուշակահար Ս. Ծննդեան շուկային մէջ: Ան կը սողոսկի տաք խմիչքներ եւ շոգընդուն գարդեր վաճառող կրպակներու շուրջ, քաղցրաւենիքներ տալով անմեղ մանուկներու, իր խոշոր փորին շուքը ձգելով Յիսուսի ծնունդը պատկերող մսուրին վրայ:

Անոր անուշը Սանթա Բլոզ է, սակայն հետզհետէ աւելի դժգոհ աւստրիացիներու համար ան կրնայ նոյնիսկ Միքի Մաուսը կամ Մարլպորոյի մարդը խորհրդանշել:

Կաղանդ Պապան մամբրիկեան ժողովրդային մշակոյթի եւ առեւտուրի իրբեւ խորհրդանշանի անխուսափելի նորագոյն ներկայութիւնն է աշխարհի տարածքին: Աւստրիոյ մէջ, որ «Լուռ Գիշեր» շարականին եւ Ս. Ծննդեան հաճելի այլ աւանդութիւններու հայրենիքն է, կարմիր հանդերձանքով գիրուկ պարոնը տօնական այս օրերուն խոր գայլոյթ կը պատճառէ:

«Երբ կը տեսնեմ կաղանդ Պապայի տարագով մարդիկ, հարց կու տամ, թէ արդեօք անոնք ի՞նչ կը մտածեն,- կ'ըսէ Հորսթ Շթրաուս՝ ցոյց տալով կաղանդ Պապայի գլխարկով հայրեր եւ անհոգ պատանիներ:- Ասիկա պարզապէս այն մարդն է, որ ծինելոյ-գէն կ'իջնէ եւ ամերիկացի մանուկներուն նուէրներ կը բաժնէն»:

Շթրաուս կը հաւատայ, թէ աւստրիացիք պէտք է ոգեկոչեն Ս. Ծննդեան իրենց սեփական խորհրդանշանը՝ Բրիսթօլի տը կամ Յիսուս մանուկը, որ կաղանդ Պապային նման անձանց կու գայ եւ նուէրներ կը ձգէ Ս. Ծննդեան գիշերը:

Շթրաուս այլ աւստրիացիներու հետ հիմնած է «Յիսուս մանուկի թեր ընկերակցութիւնը», որուն նպատակն է թոյլ չտայ, որ աշխարհիկ կաղանդ Պապան գրաւէ իրենց պաշտելի կրօնական տիպարին տեղը:

«Ասիկա աւելի կը միտի Յիսուս մանուկը պաշտպանել, քան թէ՛ Սանթա Բլոզը հարուածել», կը բացատրէ 24 տարեկան Քլաուս, որ աւստրիական օգանակային զիծերուն մէջ կը ծառայէ իրբեւ օրհանու:

Սակայն հակառակ տպաւորութիւնը կ'առնեն այն փակցանկարները, զորս Շթրաուս եւ իր ընկերակիցները կը բաժնեն Ս. Ծննդեան

շուկային կրպակներուն մէջ: Անոնք կը պատկերեն համակրելի կաղանդ Պապա մը, որուն վրայ կարմիր գիծ մը քաշուած է եւ տակը գրուած է՝ «Մենք կը հաւատանք Յիսուս մանուկին»:

Թիրոլեան լեռներու մայրաքաղաք Ինսպրուքի մէջ, ուր կաղանդ Պապային դէմ շարժումը սկիզբ առած է, այս փակցանկարները կարելի է տեսնել ցուցափեղկերու վրայ: Արշաւին մասնակցող աւստրիացիներ վաճառատուներէն կը խնդրեն զօրակցել կաղանդ Պապային եւ անոր եղբորուներուն պատկերը արգիլելու պայքարին, փոխարէնը՝ քաջալերելով Յիսուս մանուկին եւ հրեշտակներուն պատկերները:

Ընկերակցութեան անդամները կ'ըսեն, թէ կաղանդ Պապային երեւոյթը սկսած է ընդհանրապէս վերջին 3 տարիներուն, համաշխարհային արտադրութիւնը, որ Ս. Ծննդեան տօնին առիթով պատկերասփիւռի մամբրիկեան յայտագրներ եւ ժպակներ կը տարածէ Աւստրիոյ մէջ: Անոնք կաղանդ Պապային ներխուժումը կը վերագրեն նաեւ մամբրիկեան ընկերութիւններու կողմէ տօնական շուկաներ ստեղծելու ճիգերուն:

Տնտեսական նոյն արշաւը Հայտնի մեծածախ արտադրողները կ'ըսեն, թէ առեւտրական մեծ շահագոյն տօնի մը, մինչդեռ նախապէս անիկա կը նշուէր պարզապէս իրբեւ մեռելները յիշելու օր:

«Կաղանդ Պապան կ'օգտագործուի առեւտրական նկատառումներով, Ս. Ծննդի առիթով պարզապէս սպառողներ համար», կ'ըսէ Տիրիփ Թենկ, որ հիմնած է «Յիսուս մանուկի թեր ընկերակցութիւնը» եւ անոր գլխաւոր բանքերն է:

Թենկ կ'ըսէ, թէ կաղանդ Պապային արդի



Վիեննայի Ս. Ծննդեան շուկան

պատկերը ստեղծուած է Գոթա Գոյայի ընկերութեան կողմէ, որ Գոթա Գոյային կարմիր եւ ճերմակ գոյները հազուադէպ է այս տիպարին եւ գայն օգտագործած է ձմրան եղանակին իր արտադրութիւնները վաճառելու համար: Յայտնապէս Աւստրիոյ մէջ կաղանդ Պապան կը նկատուի մամբրիկեան քաղաքացիական ընկերութեան համաշխարհային աւերիչ հասոցութեան մէկ այլ օրինակը:

Բնադատներու հանգստութիւն չի պարգեւեր այն իրողութիւնը, թէ կաղանդ Պապային ծագումը եւրոպական է: Ան սերած է Ս. Նիքոլասին, հոռոմէական կաթնիկ սուրբ մը, որ Աւստրիոյ մէջ մինչեւ այսօր Դեկտեմբեր 6ին նուէրներ կը բերէ բարի մանուկներու:

Ս. Նիքոլասի պաշտամունքը Բարեկարգչական շարժումէն ետք տկարացած է եւրոպայի բոլորքական երկիրներու տարածքին: Բացառութիւն է Հոլանտան, որ կառած մնաց

«Հարիւր գ Ուլթրի» թերթին համար: Գերմանացիք ունին կաղանդ Պապային իրենց տարբերակը, որ ծանօթ է իրբեւ Վլահսխիսման կամ Ս. Ծննդի մարդը:

«Չայն ուղարկեցինք Ամերիկա, հիմա Ամերիկան գայն ետ կ'ուղարկէ Եւրոպայ», կ'ըսէ Վիեննայի մէջ կաթնիկ առաջնորդարանի բանքեր իրիւ Լայթնայերկը՝ իր զօրակցութիւնը յայտնելով Յիսուս մանուկի տիպարին պաշտպանութեան:

Թէեւ աւստրիացիներուն նուազ քան 20 առ հարիւրը մտնէ շաքար պատարագի ներկայ կ'ըլլայ, սակայն Լայթնայերկը այն մտափառութիւնը չունի, թէ կաղանդ Պապան շուքի մէջ պիտի ձգէ Յիսուս մանուկը: «Կը հաւատամ, թէ մանուկներուն միտքին մէջ Յիսուս մանուկը աւելի բարձր տեղ կը գրաւէ, մինչդեռ կաղանդ Պապան տեսակ մը օգնական է», կ'ըսէ ան:

## ՏԻՈՒՐ Ս. ԾՆՈՒՆԴ

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ ԱՅՍ ՏԱՐԻ «ՍՈՎՈՐԱԿԱՆԻՆ ՊԵՍ ՈՒՐԱՆ ՉԵՆ»

ԹԵՂԵՏԵԱՒ ՄԵՋ, ԻՆՉՊԵՍ ԿԸ ՏԵՐԿԱԿԱՆ «ՈՒՐՈՒՆ ՏԵՅՅ ԵՒՈՒՐ»

Թէեւ այս տարի Բեթղեմի մէջ չէ ջնջուած Ս. Ծննդեան տօնը, սակայն յստակ չէ, թէ քաղաքը ի՞նչպէս պիտի շէջ Բրիտանիոյ ծնունդը: Ինչ որ յստակ է, այն է, թէ քաղաքացիները տօնական մթնոլորտի մէջ չեն:

Ս. Ծննդեան գիշերէն 8 օր առաջ Իսրայէլի պետութիւնը, իսրայէլեան բանակը, փոքրիկ Բեթղեմի մը եւ անոր 13 քրիստոնէայ համայնքները, որոնք Երուսաղէմը կը համարեն իրենց սրբազան քաղաքը, տակաւին կը քննարկէին, թէ արդեօք տօնական դադար մը պիտի առնէին կրկնամարի դրուժեան մէջ, որ մէկ ամիսէ ի վեր տնային կալանքի ենթարկած է Բեթղեմի 28 հազար բնակիչները:

«Ս. Ծննդեան տօնը շատ տխուր պիտի ըլլայ Բեթղեմի մէջ, - կ'ըսէ վաճառատան մը սեփականատէրէր- Տօն չկայ, ծառեր չկան, լոյսեր չկան: Պէտք էր զբօսաշրջիկներ գային, սակայն ճամբորդութիւնները ջնջուած են: Արտօնուած չէ մեզի տունէն դուրս գալ...: Երբ կրակմարի դրուժեան է, ի՞նչպէս կարելի է Ս. Ծննդի տօնելը»:

Իսրայէլեան ուժերը քաղաքը վերագրաւեցին Նոյեմբեր 22ին իրբեւ հակազդեցութիւն Երուսաղէմի մէջ տեղի ունեցած անձնասպանական գործողութեան մը, որուն հեղինակը քանի մը ամիս առաջ Բեթղեմի փոխադրուած 22 տարեկան երիտասարդ մըն էր: Իսրայէլեան բանակը քանդեց անոր բնակարանը եւ ձերբակալեց հայրը, կրակմարի դրուժեան հաստատեց, հրասայլերով եւ զրահապատ փոխադրականներով ներխուժեց քաղաք եւ սկսաւ փողոցները շրջել Գիփերով:

Այս տարուան մէջ 6րդ անգամ ըլլալով կեանքը կանգ առաւ Բեթղեմի մէջ:

Շարժուան մէջ միայն 3էն 6 ժամ պարբերական ընդհատումներով պարտադրուած կրակմարի դրուժեանը ամայացուցեց է Բեթղեմի մէջ փողոցները: Բնակիչները քաշուած են փակ փեղկերու եւ պատուհաններու ետին, անկարող՝ գործի կամ դպրոց երթալու եւ իրենց առօրեան ապրելու:

Իսրայէլեան ուժերը պաշարած են քրիստոնէական սրբավայրերը՝ կանխարգիլելու համար կրկնութիւնը անցնելու գարնան տեղի ունեցած վէճերուն ու բախումներուն, երբ պաղեստինցի զինեալներ ապստամբած էին Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ: Բանակի բարձրաստիճան պատասխանատու մը համաձայն, իսրայէլեան ուժերը Բեթղեմի մէջ պիտի չբաշարեն Ս. Ծննդի տօնը:

Ասիկա կը հակասէ Իսրայէլի նախագահին կողմէ Յովհաննէս Պօղոս Բ. պապին տրուած թան խոստումներին, թէ բանակը Ս. Ծննդի առիթով պիտի քաշուէր Բեթղեմի մէջ, եթէ անբեկչական արարքներու անմիջական վտանգ չգագացուէր:

## ՋԻՂԵՐՈՒ ՊԱՏԵՐԱԶՄ

«ՏԻ ԷՐՈՆՈՍԻՍԻԹ» ՃԱՐԹԱԹԵՐԹԻՆ ԸՄՍԱՋԱՅՆ, Ս. ԾՆՈՒՆԴԻ ԱՌԻԹՈՎ ԱՌՈՒԾԱՆԸ ԸՏՏՉԵՏԷ ԿԸ ԴՅՈՒԱՐԱՆԱՅ ԲՈՒՏԱՆԻՈՅ ՄԵՋ: ԵՐԵՒՈՅԸ ՈՐՈՇ ՉԱՓՈՎ ՆՈՅՆ Է ԱՄԵՆ ՏԵՂ

Ո՞վ էր, որ տօնական այս եղանակը բարի կամեցողութեան շրջակ կոչած էր: Այս տարի Ս. Ծննդեան տօնը մասնաւորաբար նեղացուցիչ է Բրիտանիոյ մէջ, ուր վաճառատուները կը փորձեն քայլ պահել գնորդներու փոփոխական սովորութիւններուն հետ: Բրիտանացիք հետզհետէ տօնական օրերու իրենց գնումները կը յետաձգեն մինչեւ վերջին օրը առիթ չտալով սխալներու եւ նեղ կացութեան մատնելով ծախողներն ու ընկերութիւններու պատասխանատուները:

Բրիտանիոյ մէջ Ս. Ծննդեան տօնը տարօրինակ է մտնէ պարզային: Եւրոպական որբեւէ երկրի աւելի Բրիտանիոյ մէջ մարդիկ աւանդաբար սուղ նուէրներ կը գնեն: Սակայն ի տարբերութիւն Միացեալ Նահանգներու, ուր գնումի մարմալը բաժնուած է թենքակի-վինկի եւ տարեկան կարճ արձակուրդի միջեւ, բրիտանացի գնորդներ մէկ անգամ չուկայ իջնելով կը գնեն իրենց բոլոր նուէրները: «Վըրտիքք Ռիսըրը» ընկերութեան նախատեսութիւններուն համաձայն, գնորդներ 2002ի վերջին չորս ամիսներուն պիտի գնեն 70 միլիարդ փաունտ արժողութեամբ ապրանք, ինչ որ 4.1 առ հարիւրի յաւելում մը պիտի արձանագրէ անցեալ տարուան քաղաքատած: Այս գումարին 31.3 միլիարդ պիտի գոյանայ Դեկտեմբերին:

Փոփոխութիւնը այն է, որ վերջին 3 տարիներուն մարդիկ յաջորդաբար մէկ շաքար ու սկսած են գնել Ս. Ծննդի իրենց նուէրները: Եթէ երեւոյթ այս ձեւով շարունակուի, «Ս. Ծննդի գիշերը տուն երթալու ճամբուն վրայ պենգիին կայարանի մը հանրախանութէն պիտի գնենք մեր նուէրները», կը կատակէ Բրիտանիոյ ամէնէն մեծ վաճառատուներու ցանցին՝ Ճոն Լուիսի տնօրէնը:

Բազմաթիւ պատճառներ կը ներկայացուին՝ սկսեալ երկրագունդին ընդհանրական ջերմացումէն (մարդիկ այլեւս չեն վախնար Դեկտեմբերի կիսուն փողոցները պտտելէ) մինչեւ արդի կեանքին բնորոշ բազմազարդութիւնը, որ ժամանակ չի ձգեր գնումի: Սակայն գլխաւոր պատճառը այն է, թէ գնորդներ հետզհետէ աւելի խելացի կը դառնան: Անոնք կը յուսան, որ վաճառատուներ իրենց յոյս կորսնցնելով՝ գեղը վաճառքի սկսին Ս. Ծննդի տօնը:

Կարգ մը գնորդներ այնքան յառաջ կ'երթան, որ նուէր տալու կ'անջատեն նուէր գնելէն, նուէր տուն ունեւալով, որ Յունուարի գեղը վաճառքը շատ աւելի կանուխ կը սկսի: Սուղ, բայց զգացական նշանակութեան զուրկ իրերու, ինչպէս

**ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**  
«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի բնագիծը ընթացիկ գիրով (հաստատուեց պարագային)՝ Գաղափարաբար պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ Գերալայացեալ «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

**Պատրաստեց՝ L. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ**

galerie MERRY CHRISTMAS

# PIERROT


Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans

Liste de Naissance et de Bâpteme

Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



## ՊԱՍԵԹՊՈԼ

### Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍ - ՇԵՊԻՊԷ ՇԻԱՀ՝ 65-80

Լեռնայի խրանարանի նահանգին ներս տեղի ունեցող Լիբանանի Գ. դասակարգի տղոց պայքարն արժանանում է 2րդ հանգրուանին իր կատարած նախավերջին մրցումին, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս 80-65 արդիւնքով պարտութիւն մը կրեց Շեպիպէ Շիահին:

Լիբանանի պայքարներին իր մասնակցութիւնը բերելու համար, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս յառաջիկայ 4իրակի, 29 Դեկտեմբերին (ժամը 3:00ին) պետք է անպայման պարտութեան մատնէ իր մրցակիցը՝ Ժեպիպէ Շիահին:

### ԼԻԲԱՆԱՆ ԿՐԵՑ

#### ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Քուէյթի մէջ տեղի ունեցող Արաբական ճրգ բաժակի մրցաշարքին իր կատարած երկրորդ մրցումին, Լիբանանի ֆուտբոլի պագային խումբը անցեալ Շաբաթ օր կրեց իր երկրորդ պարտութիւնը, այս անգամ Սուրիային, 4 - 1 արդիւնքով: Լիբանանի միակ կողմ նշանակողը եղաւ Մոհամետ Ասաս:

Իր կատարած առաջին մրցումին, Լիբանան 1 - 0 արդիւնքով պարտուած էր Մեհուտական Արաբիային:

### ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ...

Շարունակուած 3րդ էջէն

Նահանգներ պայքարած են Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբին, որ կը մերժէ իր մասնակցութիւնը բերել Իրաքի դէմ յարձակումին:

«Պայրաք»ի համաձայն, նախագահ Պուշ Ըսաձ է, թէ Իրաք ի դերն հանեց խաղաղութեան հաստատման հետամուտ կողմերուն յոյսերը:

«Սաֆիր» նշած է, թէ ՄԱԿի քննիչները 9 Յունւարին Իրաքի հարցով իրենց տեղեկագիրը պիտի փոխանցեն ՄԱԿի Ապահովական խորհուրդին: Ըստ թերթին, Պուշ Իրաքի ներկայացուցած տեղեկագիրը քաջալերական չի նկատեր:

Այս մասին «Մուսթաքպալ» գրած է, թէ Փենթագոն հաստատած է, թէ 50 հազար ամերիկացի չինուոր յառաջիկայ ամսուան սկիզբը արաբական Փոչ պիտի ուղարկուի: Ռաշինկթըն Թէլ Աւիւի կը փոխանցէ, թէ Իրաքի դէմ պատերազմը պիտի սկսի Յունուարի վերջին շաբաթը ու պիտի տեսնին Փետրուարի վերջը:

Պաղեստինեան տագնապին առնչութեամբ, «Սաֆիր» գրած է, թէ միջին արեւելեան տագնապը քննող քառեակը ժողով մը կը գումարէ Ամերիկայի եւ Եւրոպայի միջեւ առկա տարակարծութիւններուն յոյսին տակ: Ըստ թերթին, Ռաշինկթըն կը յայտնէ, թէ խաղաղութեան քարտէսին գործադրութիւնը պիտի սկսի Իւրայէի մէջ կայանալիք ընտրութիւններէն ետք:

«Նահար» նշած է, թէ Միջին Արեւելքի քառեակը Միացեալ Նահանգներ, Ռուսիա, Եւրոպական Միութիւն եւ ՄԱԿ Պուշի հետ բանակցելէ ետք յայտնեց, թէ խաղաղութեան քարտէսը մօտ օրէն պիտի ամրոջանայ:

Տեղական այլ լուրերու կարգին «Պայրաք» նշած է, թէ Եմէնի նախագահը յաջող օր մը եւս անցուցած է Լիբանանի մէջ եւ իբրանանցի գործարարներու եւ ներդրողներու երաշխիքներ խոստացած:

«Անուար» գրած է, թէ տեղեկատուութեան նախարար Լապի Արիտի պոզիցիան կը ուղղեց վարչապետ Հարիրիի հեռախօսի կայանին, Միացեալ Նահանգներու քարոզչութիւնը կատարող ժապաւէնի մը ցուցադրութեան համար:

Միւս կողմէ «Մուսթաքպալ» նշած է, թէ պատկերասփիւռի «Յիուշըր» կայանը «Սիրէ Ռ Ընֆաթաիթը» յայտագիրին ընդմէջէն հակապոչեց նախարար Արիտի:

«Անուար» լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ «Յրանս Փրէս» գործակալութիւնը առաջին անգամ ըլլալով հրապարակեց Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի, անոր կնոջ՝ Ամմալի եւ իրենց զակին՝ Հաֆէպ Ասատի լուսանկարը:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՕՐ՝ ԹԱՏԱՄՈՆ ՆԱՊԱԹԻԷ - Ը. Մ. Ը. Մ.

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի պայքարներին արժանանում է 3րդ հանգրուանի մրցումներուն, այսօր՝ Երկուշաբթի, Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը Բֆարժոյ Նապաթիէի մէջ հիւրը կ'ըլլայ Թատամոն Նապաթիէի: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 2:15ին:

Այս մրցումին նման, Շաբաթ օր տեղի ունեցող մնացեալ երկու մրցումները եւս Ռահիմ - Հըրրիէ Մաժուտայ Այնճար եւ Ահի Սայտա - Շապապ Կիսմ անպայտօս օրին պատճառով յետաձգուած էին այսօրուան:

Երէկուան երեք մրցումները տեղի ունեցան առանց որեւէ ձեռով ապրուելով կլիմայական պայմաններէն:

Հ. Մ. Ը. Մ., որ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ կը հիւրընկալէր Կիսիսի խումբերէն՝ Ռիատա Ռալ Ատա-

պը, 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց անոր հետ: 1-0 արդիւնքով պարտուած Հ. Մ. Ը. Մ. յաջողեցաւ կողմը նշանակելով պարտութեան մը փրկուի, մրցումին աւարտէն կարճ ժամանակ մը առաջ:

Իր արձանագրած այս հաւասարութենէն ետք, այժմ Հ. Մ. Ը. Մ. ունեցաւ 16 կէտ: Սիարիի մէջ տեղի ունեցած մրցումին, Նահատա Պար Էլիաս 4-2 արդիւնքով պարտութեան մատնեց Իժթիմահին, իսկ Թրի-Կիսմ անպայտօս օրին վրայ տեղի ունեցած մրցումին Մահապա Թրիփոլի 2-1 արդիւնքով պարտուեցաւ իր հիւրին՝ Իսլահ Պըրժ

Շիմալիէն: Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը, որ ցարկ անպարտելի միակ խումբն է, այսօր հաւասարութիւն մէջ տեղի ունեցող մրցումին, ոչ մէկ ճիգ պիտի խնայէ աւելիով հեռանալու համար իր մրցակիցներէն, մասնաւոր, որ շաբաթավերջին տեղի ունեցած երեք մրցումները եղան ամբողջութեամբ ի նպաստ իրեն:

Այդ մէկը պատճառ պետք է դառնայ, որ Հ. Մ. Ը. Մ. տղաքը անպայման երեք կէտով վերադառնան Պէյ-րութ, անշուշտ եթէ կլիմայական պայմանները ներքին, որ այսօրուան մրցումները տեղի ունենան:

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը, որոնք բոլորն ալ տեղի պիտի ունենան ժամը 2:15ին.

ԴԱՇՏ	
Ռասիմ - Հըրրիէ Մաժուտայ Այնճար Պ. Համուտ Թատ. Նապաթիէ - Հ. Մ. Ը. Մ.	Նապաթիէ Սուր
Ահի Սայտա - Շապապ Կիսմ	

## ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՄԱՐՍԵՅ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ

Ֆրանսայի ֆուտբոլի պայքարներուն 20րդ եւ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան անցեալ շաբաթավերջին, Մարսէյ իր դաշտին վրայ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք իր հիւրին՝ Մոնպէրիի հետ, մնաց պարագլուխի դիրքին վրայ, նկատի ունենալով, որ անոր անմիջական մրցակիցը եւս Նիս հաւասարութիւն մը արձանագրեց Մարսէյի հետ, այս վերջինին դաշտին վրայ:

Նիսի նման 34 կէտ ունեցաւ Կէնկան, որ 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ամաքսիոն բարձրացաւ 3րդ դիրք. անիկա իր տկար կոլէկտրէյճին շնորհիւ կը գրաւէ երրորդ դիրքը:

Ստորեւ՝ 20րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Սոշօ - Լանս	3-0
Պասթա - Նանթ	3-1
Կէնկան - Ամաքսիօ	3-1
Լիլ - Լը Շալըր	1-0
Մարսէյ - Մոնպէրի	1-1
Սրտան - Լիոն	1-1
Սթրասբուրկ - Նիս	0-0
Թրուա - Ռէն	0-1
Փարիզ Մ. Ժ. - Պորտօ	1-1
Մոնպէլիէ - Օքսէն (յետաձգուած)	

ԴԱՍԱԿԱՐԳԻ	ԿԵՏ
1.- Մարսէյ	35
2.- Նիս	34
3.- Կէնկան	34
4.- Մոնպէրի	33
5.- Լիոն	33
.....	.....
18.- Ամաքսիօ	18
19.- Թրուա	16
20.- Մոնպէլիէ	16

## ԱՆԳԼԻՌՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՐՄԵՆԱԼ ՅԱՂԹԵՅ, ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՆՈՒՆԱՅԹԸՏ ՊԱՐՏՈՒԹԵԱՒ

Անգլիոյ ֆուտբոլի պայքարներուն 19րդ եւ երրորդ վերջին հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Արսենալ, հանդիսացաւ շահանքատու, երբ իր դաշտին՝ «Հայարթի» մէջ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Միտլըքլոպը (9րդ): Սոլ Բէմպլի (45րդ) եւ Ռոպի Փիթսի (90րդ) կողմէ նշանակուած կողերը բաւարար եղան, որ մարզիչ Արսեն Կենկէրի կայմը արձանագրէ եղանակի իր 12րդ յաղթանակը, մնալով պարագլուխի դիրքին վրայ 39 կէտով:

Մանչեսթըր Եունայթըդ 1-0 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Պիթքարրիի դաշտին, նահանգեց երրորդ դիրքը, իր տեղը վերցնելով Չելսիի, որ 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ասթոն Վիլան, երկու կէտով գերազանցեց մարզիչ Ալէքս Ֆերկլըսընի կայմը: Պիթքարրիի մարզիչ Կէրի Ֆիթքըրթի կողմէ նշանակուած կողերը բաւարար եղան, որ մարզիչ Ալէքս Ֆերկլըսընի կայմը վրայ տեղի ունեցած մրցումին, Չելսիի երկու անպայտօսան կողերը նշա-

նակեցին Էյտուր Կուտիոնսըն (42րդ) եւ Ֆրանք Լէմպար (57րդ): Նիքէտըլ իր դաշտին վրայ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Տուսնէմը, շնորհիւ՝ Նոյպէրթօ Սոյաւոյի (8րդ) եւ Քրէյկ Պէլլամի (70րդ) նշանակած կողերուն: Նիքէտըլի մարզիչ Էլըն Շիլըրը մրցումին ընթացքին փենսյոթի մը իր նպատակին չկրցաւ հասցնել, մինչ Տուսնէմի մարզիչ Փիլ Կլոմէ կարմիր քարտ մը ստացաւ:

Ուէսթ Համ - Պոլթըն	1-1
Պիթքարրի - Մանչ. Եունայթըդ	1-0
Լիվըրպոլ - Էվըրթըն	0-0
• (ԱՅՍՕՐ)	
Մանչ. Սիթի - Թորթեմհամ (ժամը 22:00ին)	

ԴԱՍԱԿԱՐԳԻ	ԿԵՏ
1.- Արսենալ	39
2.- Չելսի	37
3.- Մ. Եունայթըդ	35
4.- Էվըրթըն	33
5.- Լիվըրպոլ	32
.....	.....
18.- Ուէսթ Պրոմուիչ	16
19.- Պոլթըն	15
20.- Ուէսթ Համ	14

## Հ. Մ. Ը. Մ. Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի պայքարներուն ծիրին ներս, այսօր՝ Երկուշաբթի, ժամը 14:15ին Հ. Մ. Ը. Մ. Նապաթիէի (հարաւ) դաշտին վրայ պիտի կատարէ իր մրցումը, համանուն քաղաքի խումբին դէմ:

Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի համակիրներուն համար յատուկ օրոպիւմներ պիտի տրամադրուին՝ մեկնելու համար: Օրոպիւմները ճամբայ պիտի ելլեն ժամը 11:00ին, «Ճարլոյն» կեդրոնի կից կատարուեն, Պուրճ Համուտ:

## ԱՍՏՆՈՐԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՆՈՒԹԵՐԸ Հ. Մ. Ը. Մ. ԱԿԱՆԻՆ

«ՊԱՏՈՒԹԻՒՆ ԸԱՅ ՄԱՐՄԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՒԹԵԱՆ» 3 ՀԱՏՈՐՆԵՐԸ

Լաթակայ միւս քաղաքները հատորին փոխարժեքն է 25 տոյար: Ամանորի առիթով Ա. Բ. եւ Գ. հատորները միասնաբար՝ 60,000 իբ. ոսկի: Ա. եւ Բ. հատորներուն վճարման հետ յանձնելի, Գ. հատոր մամուլի տակ է եւ յանձնելի հրատարակութեան անմիջապէս ետք:

Ստանալ՝ Համագայինի գրախանութն, Հ. Մ. Ը. Մ. կեդրոնացողին կամ հեռաձայնելով՝ 01-260924 եւ 04-714049 քիւրուս:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ.- Հիմ քաժանորդներու պարագային Գ. հատորին քաժանորդարութիւնը սկսած է:

## ՈՒՇԱԿԻՆԿՈՒՆ ԻՐ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ...

առնուած նկարներ, որոնք կը ներկայացնեն այն կերպարները, որ եւնթարաբար հաւաքուած քանդակի վէպեր կան: Մինչ քանի որ առաջ, Ռաշինկթըն վերապահ էր նշելու տեղեկութիւններ, փոխանցել քննիչներուն՝ կանխարգիլելու համար այդ տեղեկութիւններուն փոխանցումը Պաղեստին:

Մինչ այդ, Ռաշինկթըն թափ կու տայ չինուորական պատրաստութիւններուն, յատկապէս ուժեր կեդրոնացնելով Բաթրի իր խարխուղներուն մօտ: Ամերիկեան ուժերուն կեդրոնական հրամանատարութիւնը Ֆլորիտային Բաթրի տեղափոխած է իր նստավայրը՝ հետեւելու համար աշխատանքներուն: Ամերիկեան սպայակոյտի պետ Վոր. Ռիչարտ Մալթրոս, որ ամերիկեան ուժերը պատրաստ են Իրաքի դէմ պատերազմի մը: Մալթրոս անցնուց, որ Ռաշինկթըն յանձնառուութիւն մը ունի Իրաքի գծով,

### Շարունակուած Ա. էջէն

կազմուած Մոսկուայի շահանքատու գործընդերքին: Արտաքին գործընդերքին Իրաքի Իսլամական իսլամիզմը, որ կարենաւ իր կարգին պատրաստութիւններ կը տեսնէ՝ Միացեալ Նահանգներու կողքին պատեկապէս իր համար: Բրիտանական մամուլը հրապարակած լուրերուն համաձայն, ծովուծը կը պատրաստուի անցնող քան տարուան մէջ ցամաքահանումի մեծագոյն գործողութեան: Յիշեալ աղբիւրները անցնողին, որ բրիտանական քումանու ուժեր պիտի մասնակցեն Պարսիցի գրաման: Վարչապետ Թոնի Պլէր Ուրբաթ օր բրիտանական ուժերուն հրահանգած էր պատրաստ վիճակի մէջ ըլլալ Մատամ Հիւսէյնը տապալելու գործողութեան մը մասնակից դառնալու համար:

Միւս կողմէ, Ապահովութեան խորհուրդի անդամ Ռուսիա երէկ վերջ տալով Մատամ Հիւսէյնը տապալելու գործողութեան մը մասնակից դառնալու համար:

տեղի երկրորդ իրենց վեհաժողովը, դատապարտելով Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնի սպանալիքները իրենց դէմ:

Քուէյթ Օնցի Գործակցութեան խորհուրդի վեհաժողովէն պահանջած էր խիստ կեցուածք մը որդեգրել Մատամի 7 Դեկտեմբերին արտասանած ճառին դէմ: Մատամ ներողութիւն խնդրած էր Քուէյթի ժողովուրդէն 1990ի ներխուժումին ու գրաւման համար: Քուէյթ կ'ըսէ, որ Մատամի ճանաչումը կարգին սպանալիքը նկատուող արտայայտութիւններ:

Վեհաժողովի աւարտին հրապարակուած յայտարարութիւնը դատապարտեց Մատամի ճառը, դիտել տալով որ անիկա կը բովանդակէ սպանալիքներ Քուէյթի եւ Օնցի արաբական մնացեալ երկիրներուն դէմ: Յայտարարութիւնը կը նշէր նաեւ, որ Իրաքի հողային միասնակամութիւնն ու գերիշխանութիւնը:

Ստորեւ՝ 19րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Արսենալ - Միտլըքլոպ	2-0
Պիթքարրի - Չարլթըն	1-1
Չելսի - Ասթոն Վիլ	2-0
Լիժ - Սաութհեմթըրն	1-1
Նիքէտըլ - Տուսնէմ	2-0
Ուէսթ Պրոմուիչ - Սամտըրլէմ	2-2

### ՕՆԳԻ ԱՐԱՐՆԵՐԸ ԿԸ ԴԱՏԱՊՐՏԵՆ ՍԱՏՏԱՐԸ

Օնցի վեց թագաւորութիւններն ու իշխանապետութիւնները երէկ աւար-

(ԱՅԳ)

### ՌՈՒՍԻՈՅ ՌԻՃԱՆԻԹԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԻՐԱՆ Կ'ԱՅՑՑԵԼԷ

ԹԵՎՐԱՆ, 22 (ԱՅՓ).- Ռուսիոյ կորիպային ուժանիւթի նախարար Ալեքսանտր Ռուսիանցեւ Կիրակի օր Իրան հասաւ այցելութեան մը համար, ուր տիրական պիտի ըլլայ Թեհրանի կորիպային ծրագիրին հարցը:

Ռուսիանցեւ կ'առաջադրէ համաձայնութիւն մը գոյացնել Ռուսիոյ կողմէ կառուցուող Պուշէրի կորիպային գործարանէն թափօնները ձեռք ձգելու համար:

Մ. Նահանգներ ունին այն մտավախութիւնը, թէ շողափարակ թափօններ կրնան օգտագործուիլ կորիպային պիտի ըլլան գաղտնի պատրաստութեան համար:

Իրանեան ուժանիւթի մարզի մէկ պաշտօնատարր յայտնած է, թէ Ռուսիանցեւի կ'ընկերակցի 20 անդամնոց պատուիրակութիւն մը, որ չորսօրեայ այցելութեան ընթացքին Պուշէրի գործարանը պիտի այցելէ:

Ռուս նախարարը նաեւ տեսակցութիւններ պիտի ունենայ Իրանի փոխ նախագահ Ռիպ Արեֆի, ուժանիւթի մարզի պատասխանատու Ղոլամ Ռիսա Աղապատէի եւ նախկին նախագահ Հաշէմի Ռաֆսանճանիի հետ:

Իրանի ուժանիւթի իշխանութեան մէկ բանբերը յայտնած է, թէ պաշտօնատարրներ կը պահանջեն, որ աշխատանքին թափ տրուի Պուշէրի գործարանին կառուցուող աւարտելու համար:

Այցելութիւնը տեղի կ'ունենայ, մինչ Մոսկուայի եւ Ռաշինկորնի միջեւ դիւանագիտական բանավեճերը թափ ստացած են՝ կորիպային մարզին մէջ Ռուսիոյ գործակցութեան հարցով, երկրի մը հետ, որ Մ. Նահանգներու նախագահ ձորճ Պուշի կողմէ «չարութեան առանցքի մը» մէկ մասը կը նկատուի:

Ռուսիա բացարձակապէս կը հերքէ, թէ Պուշէրի իր ծրագիրը եւ Թեհրանի հետ պիտուրական գործակցութեան այլ ձեւեր կ'օժանդակեն Իրանի կորիպային պիտի ըլլան մշակման աշխատանքին:

### ԱՊԻԵԻ ՍՏԱԽՕՍ Կ'ԱՆՈՒԱՆԷ ՌՈՒՍԻՈՅ Դ. Ա. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆԸ

Ա Վ ր պ է յ ճ ա ն ի պ ա շ տ պ ա ն ո թ ե ա ն ն ա խ ա ր ար Ս ա ֆ ա ր Ա պ ի ե տ ա խ ի օ ս ա ն լ ա ն ա ծ է Ռ ու ս ի ո յ Դ ա շ ն ա կ ց ա յ ի ն Ա ն վ ը տ ա ն գ ու թ ե ա ն Ծ ա ու յ ո լ թ ե ա ն պ ե տ ր վ եր ջ ե ռ ս յ ա յ տ ար ար ա ծ է ր, թ է ռ ու ս ա կ ա ն ա պ ա հ ո վ ա կ ա ն մ ար մ ի ն ն էր ք ող ա պ էր ծ ա ծ են Ա Պ չ ի ռ ա պ մ ա կ ա ն հ ա մ ա գ ո ռ ծ ա կ ց ու թ ե ա ն կ ե դ ը ր վ ար Վ ա գ ի ֆ Ռ ա ս ու լ ը վ ը լ ը տ ե ս ու լ թ ե ա մ Բ ա ք ո լ յ ա Փ ա ք ր ու շ է ը ր, ա վ ր պ է յ ճ ա ն ց ի Վ օր ա վ ար Վ ա գ ի ֆ Ռ ա ս ու լ ը վ ը լ ը տ ե ս ու լ թ ե ա մ Բ ա ք ո լ յ ա Փ ա ք ր ու շ է ը ր յ ա յ տ ար ար ո թ ե ա ն: «Մ Ե ր պ ա տ ա խ ա ն ր այ ն է, որ Վ ա գ ի ֆ Ռ ա ս ու լ ը վ ը ար դ է ն շ ա տ ո ն ց Պ ա ք ր ի մ է չ է. ա ն ո ռ ծ ա ու յ ո լ թ ե ա ն ծ ա մ կ է տ ր ա ւ ար տ ա ծ է, եւ ա ն ն ո ռ պ ա շ տ օ ս ի ն շ ա ն ա կ լ ա ծ է», ը ն դ գ ծ ա ծ է Ա վ ր պ է յ ճ ա ն ի պ ա շ տ պ ա ն ո թ ե ա ն ն ա խ ա ր ար ր՝ ա լ ե յ ն է լ ը վ, որ «լ ը տ ե ս ր ա ն է, ո վ լ ը տ ե ս ո լ թ ե ա ն մ ա ս ի ն կ ր խ օ ս ի»:

Ե շ է ն ք, որ Ռ ու ս ի ո յ Դ ա շ ն ա կ ց ա յ ի ն Ա ն վ ը տ ա ն գ ու թ ե ա ն Ծ ա ու յ ո լ թ ե ա ն պ ե տ ր վ եր ջ ե ռ ս յ ա յ տ ար ար ա ծ է ր, թ է ռ ու ս ա կ ա ն ա պ ա հ ո վ ա կ ա ն մ ար մ ի ն ն էր ք ող ա պ էր ծ ա ծ են Ա Պ չ ի ռ ա պ մ ա կ ա ն հ ա մ ա գ ո ռ ծ ա կ ց ու թ ե ա ն կ ե դ ը ր վ ար Վ ա գ ի ֆ Ռ ա ս ու լ ը վ ը լ ը տ ե ս ու լ թ ե ա մ Բ ա ք ո լ յ ա Փ ա ք ր ու շ է ը ր յ ա յ տ ար ար ո թ ե ա ն: «Մ Ե ր պ ա տ ա խ ա ն ր այ ն է, որ Վ ա գ ի ֆ Ռ ա ս ու լ ը վ ը ար դ է ն շ ա տ ո ն ց Պ ա ք ր ի մ է չ է. ա ն ո ռ ծ ա ու յ ո լ թ ե ա ն ծ ա մ կ է տ ր ա ւ ար տ ա ծ է, եւ ա ն ն ո ռ պ ա շ տ օ ս ի ն շ ա ն ա կ լ ա ծ է», ը ն դ գ ծ ա ծ է Ա վ ր պ է յ ճ ա ն ի պ ա շ տ պ ա ն ո թ ե ա ն ն ա խ ա ր ար ր՝ ա լ ե յ ն է լ ը վ, որ «լ ը տ ե ս ր ա ն է, ո վ լ ը տ ե ս ո լ թ ե ա ն մ ա ս ի ն կ ր խ օ ս ի»:

#### ՌԻԲԵՆԱ

Ք Ո Ւ Ջ Ս Ա Կ Ը Վ Ա Ր Է Ը Ն Դ Ի Մ Ա Դ Պ Ո Ւ Թ Ի Ն Ը Ե Ր Վ Փ Ե Ղ Կ Ե Լ Ո Ւ Բ Ա Ղ Ա Բ Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ն Ս Ը

Ք Ր Ե Ի, 22 (Ա Յ Փ).- Ու ք ր ա ն ի ո յ ն ա խ ա գ ա հ Լ է ճ ո ս ի ո Ւ Ք ու չ մ ա, որ ա մ ր ս ա տ ա ն ու ա ծ է Ի ռ ա ք ի պ է յ էր վ ա մ ա ո ա ծ ը լ լ ա յ ու, ի ն չ ա ֆ ս ն ա ե լ փ ա տ ա ծ ու թ ե ա ն ե թ ղ թ ա կ ի ց ն էր ու վ ր ա յ յ ար ձ ա կ ու մ ն էր ո յ յ ա ն ց ա ն ք ն էր ո վ, կ ր գ ո յ ա տ ե լ եր կ ի ն վ ը ա յ ի ի շ ի ա ն ո լ թ ի ն էր ա մ ր ա պ ն դ է լ ը վ՝ ը ն դ ղ ի մ ա ղ ր ու թ ե ն է ն յ ա մ ա ի ք ո ն ի ո ժ ո վ հ ր ա մ ա ռ ու մ ն էր ու ձ ա մ ր ը վ:

Ար դ է ն ի ս կ ը ն դ ղ ի մ ա ղ ի ը 22 էր ե ս փ ո խ ա ն ն էր՝ մ Ե ծ ա մ ս ա ն ո լ թ ի ն էր «Մ Ե ր Ու ք ր ա ն ի ա ն» կ ու ս ա կ ց ո թ ե ն է ն, Մ ար ս ի էր ե ս փ ո խ ա ն ա կ ա ն ը ն տ ը լ թ ի ն ն էր է ն ի վ եր, ի մ ր ա ծ են խ ո ղ ի ը դ ար ա ն ի ն մ է չ Ք ու չ մ ա յ ի ի ն պ ա ս տ կ ո ղ մ ն ո ղ ը շ ու ա ծ ի մ ր ա կ ի ն շ ու ը ը:

Վ եր ջ ի ն 3 շ ա ք ա թ ն էր ու ն մ ի ա յ ն, 7 էր ե ս փ ո խ ա ն ն էր հ ե ո ա ց ա ծ են ը ն դ ղ ի մ ա ղ ր ու թ ե ն է ն:

Ը ն դ ղ ի մ ա ղ ի ր ք ա Վ մ ա թ ի դ ե կ ա վ ար ն էր կ ՚ը ս են, թ է հ ր ա մ ա ռ ու մ ն էր ար դ ի ն էր են յ ս տ ա կ օ թ է ն թ ի ր ա խ ու ն էր գ ո ղ ձ ն շ ու մ ն էր ու ա ն ո ն ց վ ը ա յ, որ ո ն ք կ ր յ ա ն դ գ ի ն ի խ օ ս ի: Ն ա ի կ ի ն վ ար չ ա պ տ Վ ի ք ք օ ռ Ե ու շ չ է ն ք օ, որ կ ր գ ի խ ա տ ր է «Մ Ե ր Ու ք ր ա ն ի ա ն» կ ու ս ա կ ց ո լ թ ի ն էր, ի շ ի ա ն ո լ թ ի ն ն էր կ ա մ ք ա տ ա ն է «ճ ր ա յ ի ն ե թ ղ ա ք ա կ ա ն ձ ն շ ու մ ն էր» ք ա ն է ց ն է լ ու յ ա ն ց ա ն ք ո վ:



- 1. ԱՅՑԻՐԻ ԳՈՆԵԱՔ՝ 20 տարուայ ցուտի յատուկ ծրարումով:
2. VEDI ALCO արտադրութեան 15 տեսակ անունով գինի ցաւ փայտ ստեմբով:
3. Գոնեաք զանազան անուանատեսակով:
4. Գինի KHORAN 3 լիթր՝ ցուտի տուփով:
5. Գոնեաք Souvenir ԱՂԹԱՍԱՐ 10տարուայ:

VAK Trading Ըստտ. Ըեռ.: 03/626177 - 03/773609 եւ UNIVERSE վաճառատուն, Փոլիկարպոս. «Սարդարապատ» շէնք

Advertisement for hair salon featuring a man's face and text: «ԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ»... «Ճապերոյք Պարահանդէս»... «Կիրակի, 5 Յունուար 2003 երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ PHOENICIA դանդոկին մէջ Երգահանդէս երկուաքթի, 6 Յունուար 2003, երեկոյեան ժամը 7:30էն սկսեալ, UNESCO-ի արահին մէջ»...

Advertisement for Gacoché hair salon: «ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԵՐԸ»... Gacoché... «ՈՐԱԿԵԼՈՐ ԺԱՄԱՅՈՅՑՑՆԵՐՈՒ ԵՇԵԱՐՔԸ»... RADO... D&G... SEIKO... CITIZEN... SECTOR... «Պուրճ Լամուտ, «Արմենիա» պողոտայ: Հեռ. 266366, 262612»

### ԱՄԵՐԻԿԵԱՆ ՌԱՏԻՈԺԱՄ ՍԸ՝ ԻՐԱՆՑԻՆԵՐՈՒՆ

Մ. Նահանգներու նախագահ ձորճ Պուշի ստանդեցուցած է իրանցիները, թէ աւտոնոթեան տէնչին» պօրաւ իր կր կանգնի: Ան կը խօսէր շաքաթավերջին, ձայնասփիւռի սփռումներու նոր սպարկութեան մը բացումին առիթով: Անկաւանդիկեան տեղեկութիւններ եւ ժամանցի յայտագիրներ պիտի սփռէ Իրանի: «Ռատիօ Ֆարտա» ի վերատեսութեան ենթարկելի վճիռը: «Ռատիօ Ֆարտա», որ Մ. Նահանգներու կողմէ ֆինանսաւորուած ձայնասփռումի ամերիկեան 2 սպարկութիւններու «Վոյս աֆ Ամերիքա» եւ «Ալպատ Եւրոպա Ռատիօ», միացեալ քայլերուն արդիւնք է, նման է «Ռատիօ Սաուա»ի, որ Միջին Արեւելքի ուղղուած կայան մըն է: (Ա Յ Փ)

«Վաղուան Ռատիոն» կողմէ սփռուած կը լը կը յաջորդէր Իրանի մէջ ուսանողական լայնածիր ցոյցերու, որոնք ծմր տուած էին անցեայ ամիս, այլախոհակաղեմական Հաշէմ Աղաճարիի դէմ արձակուած մահապաշտէնը: Յոյցերը շարունակուած էին, հակառակ անոր որ Իրանի գերագոյն ինքնապետ Ալաթոլլա Ալի Համենէի հրահանգած էր

վերատեսութեան ենթարկելի վճիռը: «Ռատիօ Ֆարտա», որ Մ. Նահանգներու կողմէ ֆինանսաւորուած ձայնասփռումի ամերիկեան 2 սպարկութիւններու «Վոյս աֆ Ամերիքա» եւ «Ալպատ Եւրոպա Ռատիօ», միացեալ քայլերուն արդիւնք է, նման է «Ռատիօ Սաուա»ի, որ Միջին Արեւելքի ուղղուած կայան մըն է: (Ա Յ Փ)

Advertisement for Regency Palace Hotel New Year's Eve Program 2003. Features Jade Ballroom, Cesars Palace, Giverny, and Long Yin. Text includes: «Join us in ringing in the New Year of the Jade Ballroom... REGENCY PALACE HOTEL ADMA-LEBANON... Celebrate the lovely musical ambience in the greatest and most delightful surrounding...»

Advertisement for Euro Style Salon for Men European Specialists. Services include Hairwash+Brushing, Hair Coloring, Head Massage, Bain d'Huile, Permanent Curls. Christmas offer until January 10, 2003, 50% discount. Contact: BREEZVALE HOUSE, Méditerranée դրամատան կից, Ա. յարկ, հեռ.: 01 / 892081